

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2020 թվականի ապրիլի 22-ի
№143L որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
1. Էներգետիկայի բնագավառ	5
1.1. Իրավական բարեփոխումներ.....	5
1.2. Սակագնային քաղաքականություն.....	8
1.3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագրեր.....	9
1.4. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և զնումների մոնիթորինգ.....	9
1.5. Վերականգնվող էներգետիկա.....	12
2. Զրային ոլորտ	15
2.1. Սակագնային քաղաքականություն.....	15
2.2. Մոնիթորինգ և ջրամատակարարման գրաֆիկների համաձայնեցում.....	16
3. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն	17
4. Սպառողների շահերի պաշտպանություն	18
4.1. Սպառողների դիմումների քննարկում.....	18
4.2. Սպասարկման որակի ցուցանիշներ.....	21
5. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ	25
6. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը	34
7. Միջազգային համագործակցություն	37
8. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովում	39

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) պետական քաղաքականություն իրականացնող ինքնավար մարմին է, որն օրենքներով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում կարգավորում է էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառները և ջրային ոլորտը:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորող մարմնի դերն ու նշանակությունը նորովի արժևորվեցին 2015 թվականի Սահմանադրության ընդունմամբ, երբ սահմանադրաիրավական կարգավորումների հիմքում դրվեց միջազգային առաջավոր փորձը՝ ուղղված ինստիտուցիոնալ, քաղաքական, իրավական և ֆինանսական առումով անկախ մասնագիտացված կարգավորող մարմին ձևավորելուն: Նշված փոփոխությունների արդյունքում հանձնաժողովին վերապահվեց ինքնավար մարմնի կարգավիճակ, որն ամրագրվեց նաև գործընթացին հաջորդած «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի փոփոխություններում՝ նախատեսվելով անկախ և ինքնավար կարգավորող մարմնի գործունեության ապահովման օրենսդրական երաշխիքները:

Նոր սահմանադրաիրավական կարգավորումների համաձայն՝ 2019 թվականին երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ ձևավորեց հանձնաժողովի նոր կազմը, որը որպես ինքնավար մարմին, իր առջև խնդիր է դրել ապահովելու հանրային ծառայություններից օգտվող սպառողների և ոլորտի տնտեսվարող անձանց շահերի հավասարակշռում և վերջիններիս նկատմամբ խտրականության բացառում՝ հիմքում դնելով կարգավորող մարմնի անկախությունը և կառույցի նկատմամբ վստահության բարձրացումը: Հարկ է նշել, որ սահմանադրաիրավական կարգավորումների շրջանակում լրամշակված «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի համաձայն՝ հանձնաժողովի կազմում հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոն չի նախատեսվել:

Այսպիսով, հանձնաժողովը 2019 թվականին գործել է հետևյալ կազմով.

Գարեգին Բաղրամյան՝ հանձնաժողովի նախագահ (2019 թվականի ապրիլի 19-ից),

Սերգեյ Աղինյան՝ հանձնաժողովի անդամ (2019 թվականի մայիսի 31-ից),

Սեդա Շահինյան՝ հանձնաժողովի անդամ (2019 թվականի մայիսի 31-ից),

Մեսրոպ Մեսրոպյան՝ հանձնաժողովի անդամ (2019 թվականի մայիսի 31-ից),

Կանոն Սարգսյան՝ հանձնաժողովի անդամ (2019 թվականի մայիսի 31-ից),

Միքայել Սողոմոնյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ (մինչև 2019 թվականի մայիսի 30-ը),

Մուշեղ Կոչեցյան՝ հանձնաժողովի անդամ (մինչև 2019 թվականի մայիսի 30-ը),

Արթուր Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ (մինչև 2019 թվականի մայիսի 30-ը),

Արմեն Բաղդասարյան՝ հանձնաժողովի անդամ (մինչև 2019 թվականի մայիսի 30-ը):

Իր առջև դրված խնդիրների՝ առավել համակողմանի և արհեստավարժ լուծման նպատակով հանձնաժողովը 2019 թվականի տարեկեսից նախաձեռնել է կառուցվածքային օպտիմալացմանն ուղղված փոփոխություններ, որոնց շրջանակում կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների վերանայման և դրանց համախմբման արդյունքում գործող 14 ստորաբաժանումները փոխարինվեցին 9-ով՝ համաձայն հետևյալ կառուցվածքի՝

- 1) Սակագնային քաղաքականության վարչություն,
- 2) Իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- 3) Հեռահաղորդակցության վարչություն,
- 4) Ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչություն,
- 5) Գործերի կառավարման վարչություն,
- 6) Ներքին աուդիտի բաժին (գործել է մինչև 2019 թվականի նոյեմբերի 28-ը, քանի որ հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 27-ի N449L որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել նշված ստորաբաժանման լիազորություններին առնչվող կարգավորումները և համապատասխան իրավական հիմքերը),
- 7) Անձնակազմի կառավարման բաժին,
- 8) Հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,
- 9) Միջազգային համագործակցության բաժին:

Հանձնաժողովի բնականոն աշխատանքը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի համաձայն, համակարգում և ապահովում է հանձնաժողովի նախագահը, իսկ հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների շրջանակում՝ հանձնաժողովի անդամները և գլխավոր քարտուղարը:

1. Էներգետիկայի բնագավառ

1.1. Իրավական բարեփոխումներ

Հանձնաժողովի առաջնահերթ գործառույթներից մեկը կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումն է եւ միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի եւ առավել ճկուն իրավական կարգավորումը՝ Էլեկտրոլ սպառողների եւ կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման ու կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից եւ հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացման, շուկայի չկարգավորվող հատվածում մրցակցային մեխանիզմների ներդրման, շուկա նոր մասնակիցների անխոչընդոտ մուտքի ապահովման, տարածաշրջանային առևտրի խթանման, այդ թվում՝ լիցենզավորման ազատականացման արդյունքում առավել ցածր գնով էլեկտրական էներգիայի ներկրման հնարավորությունների ստեղծման, գործող մասնակիցների իրավունքների ու պարտականությունների՝ շուկայի նոր կառուցվածքին համապատասխանեցման նպատակով 2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի հիման վրա հանձնաժողովի կողմից ընդունվել են մի շարք իրավական ակտեր և փոփոխություններ կատարվել արդեն իսկ ընդունվածներում:

Նշված օրենքի շրջանակում եւ ի կատարումն հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային ծրագրի՝ 2019 թվականի ընթացքում՝

1) հաստատվել են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները և Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասին պայմանագրի օրինակելի ձևը, որոնցով ստեղծվել են էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և մրցակցային շուկայի բաղադրիչների ներդրման համար համապատասխան իրավական և տնտեսական նախադրյալները, հստակեցվել են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային հարաբերությունները (այդ թվում՝ էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության ապահովման մեխանիզմի ներդրման, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առանձին սեգմենտներում սակագնային կարգավորման և գների ձևավորման),

2) հաստատվել են էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային

կանոնները և համապատասխան պայմանագրերի օրինակելի ձևերը, որոնցով կանոնակարգվել են էլեկտրական էներգիայի բաշխման և մատակարարման գործառույթների տարանջատմամբ պայմանավորված՝ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային հարաբերությունները (այդ թվում՝ նոր մատակարարների ընտրության հետ կապված),

3) հաստատվել են էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման նոր ցանցային կանոնները, որոնցով նախատեսվում է ապահովել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալի և արդյունավետ աշխատանքը, հաղորդման համակարգի բաց, թափանցիկ և ոչ խտրական հասանելիությունն ու օգտագործումը, ինչպես նաև կարգավորել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական շուկայում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց փոխհարաբերությունները,

4) հաստատվել են էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները, որոնցով նախատեսվում է ապահովել էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցի զարգացման պլանավորումը, բաշխման ցանցի օպերատիվ կառավարումը, էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորումն ու կարգավարումը, բաշխման ցանցին նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերի, նոր հզորությունների միացմանն առնչվող հարաբերությունները, ինչպես նաև էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման համակարգերին ներկայացվող պահանջները,

5) լրանշակվել են էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության նորմատիվային ցուցանիշները՝ նպատակ ունենալով նշված ցուցանիշների պահպանումն ու զնախատումն իրականացնել համակարգի բոլոր հնարավոր բնականոն ռեժիմների դեպքում, ինչպես նաև անցումային և կայունացված ռեժիմների վերլուծության և մոդելավորման միջոցով բարելավել էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման հնարավորությունները:

Վերը նշված կարգավորումները, շուկայի նոր մոդելին անցման ժամկետով պայմանավորված, ուժի մեջ կմտնեն 2021 թվականի փետրվարի 1-ից:

Հաստատվել է էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգը: Կարգով սահմանվել են՝

- լիցենզավորված անձանց կողմից կնքվող գործարքների համաձայնեցմանն ուղղված հիմնական պահանջները և համաձայնեցման ընթացակարգը,

- համաձայնեցման ոչ ենթակա գործարքները,
- լիցենզավորված անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի բնորոշումը, լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կոնկրետ տեսակները, կամ գույքին բնորոշ այն հատկանիշները, որոնց հիման վրա տվյալ գույքը կարող է որակվել որպես լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույք:

Շարունակվել են նաև էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես, էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործման, տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանման նպատակով սահմանվել են կայանների (ըստ տեսակների) կառուցման ժամանակահատվածների հստակ ժամկետներ:

Այսպես, էլեկտրական էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիայում կառուցման ժամանակահատված է սահմանվել՝

- 1) 2 տարի՝ մինչև 5 ՄՎտ տեղակայվող հզորությամբ արևային կայանի և մինչև 30 ՄՎտ տեղակայվող (հաշվարկային) հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող այլ կայանի դեպքում, եթե ավելի կարճ ժամկետ չի հայցվել,
- 2) 3 տարի՝ փոքր հիդրոէլեկտրակայանի դեպքում, եթե ավելի կարճ ժամկետ չի հայցվել,
- 3) այլ տեսակի կայանի, ինչպես նաև 30 ՄՎտ-ը գերազանցող՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող կայանի դեպքում՝ համաձայն հայցվող ժամկետի և գործարար ծրագրի (փորձաքննություն անցած նախագծի):

Առանձին կարգավորում է նախատեսվել «Պետություն-Մասնավոր գործընկերություն» գործարքների շրջանակում տրամադրվող լիցենզիաների մասով: Մասնավորապես, նշված լիցենզիաներում կառուցման ժամանակահատվածները կսահմանվեն համաձայն այդ գործարքների:

Նշվածի շրջանակում սահմանվել են նաև այդ ժամանակահատվածների երկարաձգման հստակ ժամկետների վերաբերյալ կարգավորումներ:

1.2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, 2020 թվականի փետրվարի 1-ից մինչև 2021 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար կանխատեսվող էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության, ներկրման, արտահանման և սպառման հաշվեկշիռը, իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման անհրաժեշտությունը և ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վրա ազդող մի շարք այլ գործոնների փոփոխությունները՝ հանձնաժողովը վերահաշվարկել է արտադրող խոշոր կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման վճարները (սակագները), որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի փետրվարի 1-ից:

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա, ըստ գործող կարգի, սահմանվել են 3 փոքր հիդրոէլեկտրակայաններից, 3 նորակառույց արևային էլեկտրակայաններից, 1 հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները:

Միևնույն ժամանակ, ելնելով սղաճի և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի, համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Հետևաբար, վերահաշվարկվել և 2019 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ են մտել 3 հողմային էլեկտրակայաններից, 10 արևային էլեկտրակայաններից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» փակ բաժնետիրական ընկերության կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից և 176 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Նշված գործընթացի շրջանակում, ելնելով գործող իրավակարգավորումներից,

վերանայվել են նաև «Երևանի Մխիթար Չերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «ՀայՌուսկոգեներացիա» փակ բաժնետիրական ընկերության «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կոգեներացիոն կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Միևնույն ժամանակ, վերանայվել են էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները:

Արդյունքում, սակագների նշված վերանայման գործընթացի շրջանակում, 2020 թվականի փետրվարի 1-ից վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագները չեն փոփոխվել:

Հաշվետու տարվա վերջին ուսումնասիրվել և հաստատվել են էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող՝ 2020 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունների չափաքանակները:

1.3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագրեր

Հանձնաժողովը 2019 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում տրամադրել է էլեկտրական էներգիայի արտադրության 29 լիցենզիա, քննարկվել են լիցենզիաների վերաձևակերպման՝ 15, լիցենզիաների գործողության ժամկետների երկարաձգման՝ 14, արտադրության լիցենզիաներով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածների երկարաձգման և էլեկտրական էներգիայի արտադրության ժամանակահատվածի անցնելու 17 հայտեր: Ուժը կորցրած են ճանաչվել էներգետիկայի բնագավառի 6 լիցենզիաներ:

Հանձնաժողովի կողմից առևտրային կանոններին համապատասխան փորձաքննություն են անցել և գրանցվել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 150 պայմանագրեր:

1.4. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքների իրականացումը կարևոր է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող

էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներուն դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով, հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

2019 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր են իրականացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» և «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները:

Ընդհանուր առմամբ, նախատեսված էր իրականացնել շուրջ 45.4 միլիարդ դրամի չափով ներդրումներ, որոնք նպատակաուղղված էին մի շարք խնդիրների լուծմանն ու կարգավորմանը: Մասնավորապես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրի իրականացումն ուղղված է եղել շահագործման և պահպանման ծախսերի, էլեկտրական էներգիայի կորուստների, ինչպես նաև հոսանքազրկումների քանակի և տևողության կրճատմանը, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրի իրականացումը՝ գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում անխափան, հուսալի և անվտանգ գազամատակարարման ապահովմանը, ծառայությունների մատուցման ու սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրի իրագործումն ապահովել է հիդրոէլեկտրակայանների աշխատանքի շարունակականությունը և անվտանգության ու հուսալիության մակարդակի բարձրացումը, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է եղել ընկերության բնականոն գործունեության ապահովմանը, իսկ «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը՝ էլեկտրական էներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգում տվյալների հաղորդման ենթակառուցվածքների արդիականացմանը:

Բացի վերը նշվածից, «Հայկական ատոմային էլեկտրակայան», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն», «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունները ներդրումներ են իրականացրել նաև պետական երաշխիքով ստացված վարկային ծրագրերի շրջանակում:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձրել էլեկտրական էներգիայի մատակարարման և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող

ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ առաջնահերթություն տալով սպասարկման որակի ցուցանիշների առավել ցածր մակարդակ ունեցող հատվածներում ներդրումների իրականացմանը: Մասնավորապես, ներդրումային ծրագրերի համաձայնեցման գործընթացում առանձնակի ուշադրություն է դարձվել սպասարկման որակին առնչվող՝ սպառողներից ստացված դիմում-բողոքներին, ինչպես նաև հանձնաժողով ներկայացված համապատասխան տեղեկատվությամբ արտացոլված՝ առավել վատ ցուցանիշներով հասցեներին, որոնք ներառվում են ընկերությունների ներդրումային ծրագրերում:

2019 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Հաշվարկային կենտրոն», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների 2018 թվականի ներդրումային գործունեության արդյունքները, քննարկվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Հաշվարկային կենտրոն» և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացված ներդրումային ծրագրերը և ընդունվել են համապատասխան որոշումներ:

Ներդրումային գործունեության վերլուծության արդյունավետության բարձրացման, ներդրումների հավաստիության և հիմնավորվածության ստուգման առավել թիրախային մեթոդներ և գործիքներ օգտագործելու նպատակով 2019 թվականին հանձնաժողովը, քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության հետ, առաջին անգամ նախաձեռնել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային գործունեության աուդիտի իրականացում, որը նպատակ ուներ՝

- Բարձրացնել հանրության և շահագրգիռ բոլոր կողմերի մոտ ընկերության ներդրումային գործունեության նկատմամբ օբյեկտիվ և հիմնավոր գնահատականի ձևավորման նկատմամբ վստահությունը,
- Բարձրացնել սակագների սահմանման և վերանայման գործընթացի հիմնավորվածությունը,
- Դրական ազդեցություն ունենալ կարգավորվող սակագների նկատմամբ,
- Բացառել սակագների ձևավորման գործընթացում հաշվի առնվող գործոնների նկատմամբ կարգավորվող անձանց միջամտությունը կամ ներգործությունը:

Հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 10-ի №256Ա որոշմամբ հաստատվել են աուդիտի տեխնիկական առաջադրանքը և ժամանակացույցը, աուդիտորական

ծառայություններ մատուցողի ընտրության արդյունքում ընտրվել է “GRAND THORNTON” աուդիտորական կազմակերպությունը, որը վերջնական արդյունքներն ամփոփել է 2019 թվականի տարեվերջին և այդ արդյունքները հաշվի են առնվել 2020 թվականի սակագների սահմանման ժամանակ:

Կարգավորվող ընկերությունների կողմից իրականացված ներդրումային ծրագրերի շրջանակում՝ 2018 և 2019 թվականներին ավարտված և շահագործման հանձնված ներդրումների ծավալները ներկայացված են սույն հաշվետվության N1 հավելվածում:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև իր կարգավորման դաշտում գործող հանրային կազմակերպությունների՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ՀրազՁԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես էլ ընկերությունների ինտերնետային կայքերում:

2019 թվականի ընթացքում հանձնաժողովը, համաձայն հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատման նպատակով իրականացրել է նշված անձանց կողմից հրապարակվող գնումների պլանների մոնիթորինգ, որի արդյունքները հրապարակվել են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.psrc.am): Նույն ժամանակահատվածում իրականացվել է նաև վերոնշյալ անձանց գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը:

1.5. Վերականգնվող էներգետիկա

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործել են՝

- 189 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 25-ը գտնվել են կառուցման փուլում:
Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է

շուրջ 375 ՄՎտ, իսկ կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններինը՝ շուրջ 58 ՄՎտ: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 214 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 433 ՄՎտ գումարային հզորությամբ:

- 12 արևային էլեկտրակայաններ, ևս 32-ը գտնվել են կառուցման փուլում: Գործող արևային էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 10 ՄՎտ, իսկ կառուցվող արևային էլեկտրակայաններինը՝ շուրջ 172,6 ՄՎտ: Այսպիսով, կառուցվող էլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 44 արևային էլեկտրակայաններ՝ 182,6 ՄՎտ գումարային հզորությամբ:
- 4 հողմային էլեկտրակայաններ, ևս 1-ը գտնվել է կառուցման փուլում: Գործող հողմային էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 4,2 ՄՎտ, իսկ կառուցվող հողմային էլեկտրակայանինը՝ 4 ՄՎտ: Այսպիսով, կառուցվող հողմային էլեկտրակայանի գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 5 հողմային էլեկտրակայաններ՝ 8,2 ՄՎտ գումարային հզորությամբ:

Գործող և գործարկման ենթակա փոքր հիդրոէլեկտրակայանների, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող այլ կայանների ամփոփ ցուցանիշները, ինչպես նաև հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիաների համաձայն՝ կառուցման և արտադրության փուլերում գտնվող հիդրոէլեկտրակայանների հզորությունների և վերջիններիս կողմից էլեկտրական էներգիայի արտադրության ծավալների մասին տեղեկատվությունը ներկայացված է սույն հաշվետվության NN 2-7-րդ հավելվածներում:

Հաշվի առնելով էներգետիկայի բնագավառում իրականացված օրենսդրական բարեփոխումները, ներդրողների շարունակական հետաքրքրությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության առաջարկությունը, նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի զարգացմանը և հնարավորություն ընձեռել ներդրողներին ակտիվորեն ներգրավվել համապատասխան ներդրումային ծրագրերին՝ փոփոխություններ են կատարվել արևային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների տրամադրման, սակագների սահմանման ժամկետային և գումարային հզորությունների համար սահմանափակումներ նախատեսող իրավակարգավորումներում: Մասնավորապես,

- մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանների կառուցման և շահագործման նպատակով լիցենզիաների տրամադրման գումարային սահմանաչափերը 2019 թվականի համար ավելացվել են 50 ՄՎտ-ով և 2020

թվականի համար նախատեսվել է ևս 50 ՄՎտ: Ընդ որում, 2019 թվականի համար նախատեսված լրացուցիչ 50 ՄՎտ հզորությունը մինչև տարվա վերջ չտրամադրվելու դեպքում՝ չլրացված մասը գումարվել է 2020 թվականի համար նախատեսված հզորությանը: Այդպիսով, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային կայանների գումարային հզորությունը կազմելու է առավելագույնը 200 ՄՎտ:

- մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների տրամադրման և դրանց համար սակագնային կարգավորումներին առնչվող ժամկետները երկարաձգվել են համապատասխանաբար՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը և 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:
- երկարաձգվել են մինչև 30 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների տրամադրման և դրանց համար սակագնային կարգավորումներին առնչվող ժամկետները, համապատասխանաբար՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը և 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող էլեկտրակայանների համար՝ գործող սակագնային կարգավորման ժամկետային սահմանափակումները՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգետիկ անկախության ապահովման առումով տարեցտարի առավել նշանակալի է դառնում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար արտադրողների և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության միջև իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի գործընթացը: Նշված գործընթացը թույլ է տալիս ինքնավար արտադրող հանդիսացող սպառողներին՝ էլեկտրական էներգիայի սեփական արտադրության միջոցով բարելավել և համահարթեցնել սպառման ռեժիմները՝ նպաստելով գործարար միջավայրի փոքր և միջին հատվածի էներգատար ճյուղերում ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի նվազեցմանը:

2019 թվականի տարեվերջի դրությամբ բաշխման ցանցին միացված ինքնավար արտադրողների քանակը կազմել է 1944, իսկ վերջիններիս համակարգերի ընդհանուր հզորությունը՝ մոտ 33 ՄՎտ:

Նույն ժամանակահատվածում համապատասխան տեխնիկական պայմաններ ստացած և փոխհոսքերի նպատակով համակարգին միացման ընթացքում գտնվող սպառողների քանակը կազմել է 123, որոնց համակարգերի պոտենցիալ հզորությունը կազմել է 5.4 ՄՎտ:

2. Ջրային ոլորտ

2.1. Սակագնային քաղաքականություն

Նպատակ ունենալով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաժանորդներին մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների 2020 և 2021 թվականների սակագները պահպանել գործող (գումարային 180 դրամ/խմ՝ ներառյալ ԱԱՀ-ն) սակագներին հնարավորին մոտ մակարդակում՝ Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2019 թվականի հուլիսի 25-ին ստորագրվել է «Վարձակալության պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիր: Հաշվի առնելով նշված համաձայնագրի 9-րդ կետը՝ փոփոխություններ են իրականացվել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմաններում՝ ամրագրելով 2020 և 2021 թվականների բազիսային մանրածախ սակագների և ջրամատակարարման ծավալների նոր մակարդակներ՝ համապատասխանաբար նվազեցնելով նաև նույն տարիների մեծածախ ջրամատակարարման և ջրահեռացման բազիսային սակագները: Բացի այդ, «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի պայմաններում կատարված մեկ այլ փոփոխության արդյունքում ամրագրվել է, որ եթե որևէ տարվա համար հաշվարկված մանրածախ ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագնի և բաժանորդների համար փաստացի գործող գումարային գնի տարբերությունը չի գերազանցում 0.5%-ը, ապա տվյալ տարվա համար հաստատվում են ծառայությունների մատուցման՝ բաժանորդների համար փաստացի գործող գներին հավասար սակագներ:

«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը, համաձայն իրեն տրամադրված լիցենզիայի պայմանների «Սակագներ և սակագնային ճշգրտումներ» հավելվածի, 2019 թվականի օգոստոսին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հայտ էր ներկայացրել հանձնաժողով: Համաձայն սակագների ճշգրտման մեխանիզմների՝ սակագները յուրաքանչյուր տարի ենթակա են ճշգրտման՝ հաշվի առնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների փոփոխությունը, սղաճը, ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունը, ինչպես նաև ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործելուց և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցումը: Ելնելով սակագնի ճշգրտման նշված մեխանիզմներով ամրագրված բոլոր

գործոնների ազդեցության հանրագումարից և մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիության ստուգման նպատակով իրականացված մոնիթորինգի արդյունքներից՝ վարձակալության 4-րդ պայմանագրային տարվա (2020 թվական) համար «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների գումարային մեծությունը հաշվարկվել էր 180,174 դրամ/խմ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), որը 2019 թվականին բաժանորդների կողմից փաստացի վճարվող 180 դրամ/խմ սակագնից (ներառյալ ավելացված արժեքի հարկը) ավել է 0.1 տոկոսով:

Ուստի, հաշվի առնելով, որ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված լիցենզիայի պայմանների համաձայն, եթե որևէ տարվա համար հաշվարկված մանրածախ ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագնի և բաժանորդների համար փաստացի գործող գումարային գնի տարբերությունը չի գերազանցում 0.5%-ը, ապա տվյալ տարվա համար հաստատվում են ծառայությունների մատուցման՝ բաժանորդների համար փաստացի գործող գներից հավասար սակագները, «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 2020 թվականի սակագները պահպանվել են 2019 թվականին փաստացի գործող սակագների մակարդակին (180 դրամ/խմ ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Միաժամանակ, ճշգրտվել են ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագները:

2.2. Մոնիթորինգ և ջրամատակարարման գրաֆիկների համաձայնեցում

«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հայտի ուսումնասիրության շրջանակում, ընկերության կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիության ստուգման նպատակով հանձնաժողովի, Ջրային կոմիտեի և սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ 2019 թվականին ևս իրականացվել է

մոնիթորինգ՝ հայտնաբերելու փաստացի մատակարարվող խմելու ջրի չհաշվառվող ծավալները: Մոնիթորինգի շրջանակում ձևավորված աշխատանքային խմբերն իրականացրել են ուսումնասիրություն ոչ բնակիչ-բաժանորդ հանդիսացող շուրջ 2300 սպառողների մոտ և արձանագրել շուրջ 210 խախտում: Մոնիթորինգի արդյունքում ջրամատակարարման լրացուցիչ ծավալները հաշվարկվել են հետևյալ մոտեցումով.

1. Ջրոյական սպառում ունեցող սպառողների մոտ՝ մոնիթորինգի արդյունքում գրանցված և ընկերության բազայով ներկայացված ցուցմունքների տարբերությամբ,

2. Ապօրինի ջրօգտագործման, ջրաչափերի շրջանցման, կապարակնիքների բացակայության և այլ խախտումների համար՝ ներանցման խողովակի թողունակությամբ՝ ջրի շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով:

Այսպիսով, մոնիթորինգի արդյունքում հաշվարկված լրացուցիչ ծավալը կազմել է 0,78 մլն խմ (Երևանում՝ 0,48 մլն խմ և մարզերում՝ 0,30 մլն խմ):

Մատակարարի կողմից հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկների փոփոխությունները վերահսկելու նպատակով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև մարտի 1-ը, հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացնում տվյալ տարվա ապրիլին, իսկ մինչև օգոստոսի 1-ը՝ տվյալ տարվա սեպտեմբերին հրապարակվելիք իր սպասարկման տարածքի ջրամատակարարման գրաֆիկը:

3. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

2019 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունները, «Վեոն Արմենիա», «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունները հանձնաժողովի սահմանած ձևերով և պարբերականությամբ ներկայացրել են ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման արդյունքում շուկայի նոր

մասնակիցների՝ էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիաներ ունեցող անձանց ֆինանսատնտեսական գործունեության ցուցանիշների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով վերջիններիս համար մշակվել են հանձնաժողով ներկայացվող ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների ձևեր:

Հաշվի առնելով, որ էլեկտրոնային համակարգերը լայն կիրառություն են ստանում գործարար ոլորտում և նպաստում են աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, հարմարավետությանն ու ժամանակի խնայողությանը՝ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ստեղծվել է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային հարթակ, որը թույլ է տալիս հանրային ծառայությունների ոլորտի կարգավորող անձանց օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները և այլ տեղեկատվությունը հանձնաժողով ներկայացնել էլեկտրոնային եղանակով, ինչը նպաստում է նաև կարգավորվող ընկերությունների վարչական ծախսերի կրճատմանը:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարումների կատարման գործընթացը վերահսկելու նպատակով հանձնաժողովն ամսական արդյունքներով ստացել, վերլուծել և ամփոփել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվությունը:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով ամփոփվել է հիշյալ ընկերությունների կողմից ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունը և հրապարակվել հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի (այդ թվում՝ խմելու և ոռոգման ջրի մասով) 2018-2019 թվականների համեմատական ցուցանիշները ներկայացված են սույն հաշվետվության NN 8-11-րդ հավելվածներում:

4. Սպառողների շահերի պաշտպանություն

4.1. Սպառողների դիմումների քննարկում

Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ հարաբերություններում բաժանորդների ունեցած խնդիրների կարգավորման կամ

հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում մատուցվող ծառայությունների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով 2019 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներից, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, կազմակերպություններից (նաև սպառողների շահերը պաշտպանող) և ֆիզիկական անձանցից ստացվել է 1570 դիմում, որոնցից 713-ը՝ գրավոր, 857-ը՝ բանավոր: Դիմումները քննարկվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Գրավոր դիմումներից 140-ը բավարարվել են, 127-ը մասամբ են բավարարվել, 12 դիմումի դեպքում տրվել է տեղեկատվություն, 32-ի դեպքում հանձնաժողովում հարուցված վարչական վարույթը կարճվել է, 17 դիմումների քննարկումը դուրս է եղել հանձնաժողովի իրավասությունների շրջանակից, 7 դիմումներ վերահասցեագրվել են իրավասու մարմիններ, իսկ 378-ը՝ չի բավարարվել (տրվել է պարզաբանում, արձանագրվել է խախտման բացակայություն):

Բանավոր դիմումներից 35-ով բարձրացված խնդիրները կարգավորվել են, 335 դիմումներին տրվել է պարզաբանում, 296 դիմումների դեպքում առաջարկվել է գրավոր դիմել հանձնաժողով, 28-ի դեպքում՝ կարգավորվող ընկերություններին, իսկ 14-ի դեպքում՝ այլ իրավասու կառույցների, քանի որ դիմումներով բարձրացված հարցերի քննարկումը դուրս է եղել հանձնաժողովի իրավասությունների շրջանակից, 149 դիմումների դեպքում դիմումատուներին տրվել է տեղեկատվություն:

Հանձնաժողով ներկայացված 713 գրավոր դիմումից 207-ը վերաբերել է էլեկտրական էներգիայի, 79-ը՝ բնական գազի, 389-ը՝ խմելու ջրի մատակարարման, 38-ը՝ հեռահաղորդակցության բնագավառներին, մասնավորապես.

- էլեկտրական էներգիայի մատակարարմանն առնչվող 207 դիմումներից 54-ը վերաբերել են ներկայացված վճարման հաշիվներին, 32-ը՝ էլեկտրաէներգիայի որակին, 28-ը՝ նոր սպառող գրանցվելու ընթացակարգին, 20-ը՝ էլեկտրամատակարարման ընդհատումներին, 13-ը՝ էլեկտրամատակարարման դադարեցման վերականգնմանը, 2-ը՝ կատարված վերահաշվարկին և 58-ը՝ այլ բնույթի,
- բնական գազի մատակարարմանն առնչվող 79 դիմումներից 29-ը վերաբերել են սպառված բնական գազի վերահաշվարկին, 8-ը՝ ներկայացված վճարման հաշիվներին, 9-ը՝ նոր սպառող գրանցվելու ընթացակարգին, 7-ը՝ գազամատակարարման դադարեցմանը, 5-ը՝ ներտնային տեխնիկական սպասարկմանը և 21-ը՝ այլ բնույթի,
- խմելու ջրի մատակարարմանն առնչվող 389 դիմումներից 149-ը վերաբերել են կատարված վերահաշվարկին, իսկ 47-ը՝ ներկայացված վճարման հաշիվներին

չհամաձայնելուն, 53-ը՝ ջրամատակարարման գրաֆիկի խախտմանը, 20-ը՝ մատակարարվող խմելու ջրի ճնշմանը, 30-ը՝ ջրամատակարարման ցանցերի և կոյուղագծերի տեխնիկական վիճակին, 23-ը՝ նոր բաժանորդ դառնալուն և 67-ը՝ այլ բնույթի,

- հեռահաղորդակցությանն առնչվող 38 դիմումներից 10-ը վերաբերել են վճարման հաշիվներին չհամաձայնելուն և 28-ը՝ այլ բնույթի: Ներկայացված վճարման հաշիվներին դիմումատուների անհամաձայնությունը հիմնականում վերաբերել է պայմանագրային հարաբերություններին, որոնց կարգավորումը սահմանված է նույն պայմանագրերով:

Հանձնաժողովում գործող թեժ գծի հեռախոսահամարով, ինչպես նաև հանձնաժողով այցելելով, անհատները և կազմակերպությունների ներկայացուցիչները խորհրդատվություն են ստացել մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում՝ անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ:

Բանավոր ներկայացված 857 դիմումից 296-ը վերաբերել են էլեկտրական էներգիայի մատակարարմանը, 125-ը՝ բնական գազի մատակարարմանը, 400-ը՝ խմելու ջրի մատակարարմանը, 33-ը՝ հեռահաղորդակցության ոլորտին և 3-ը՝ ջերմամատակարարմանը, մասնավորապես.

- էլեկտրական էներգիայի մատակարարմանն առնչվող 296 դիմումներից 26-ը վերաբերել են ներկայացված վճարման հաշիվներին չհամաձայնելուն, 24-ը՝ էլեկտրամատակարարման ընդհատումներին, 30-ը՝ էլեկտրամատակարարման դադարեցմանը և վերականգնմանը, 100-ը՝ նոր սպառող գրանցվելու ընթացակարգին, 23-ը՝ էլեկտրաէներգիայի որակին, 3-ը՝ կատարված վերահաշվարկին և 90-ը՝ այլ բնույթի,
- բնական գազի մատակարարմանն առնչվող 125 դիմումներից 3-ը վերաբերել են ներկայացված վճարման հաշիվներին, 20-ը՝ սպառված բնական գազի վերահաշվարկին, 15-ը՝ նոր սպառող գրանցվելու ընթացակարգին, 11-ը՝ գազամատակարարման դադարեցմանը, 14-ը՝ ներտնային տեխնիկական սպասարկմանը և 62-ը՝ այլ բնույթի,
- խմելու ջրի մատակարարմանն առնչվող 400 դիմումներից 38-ը վերաբերել են կատարված վերահաշվարկին, 15-ը՝ վճարման հաշիվներին, 90-ը՝ ջրամատակարարման գրաֆիկին, 62-ը՝ մատակարարվող խմելու ջրի ճնշմանը, 83-ը՝ ջրամատակարարման ցանցերի և կոյուղագծերի տեխնիկական վիճակին, 40-ը՝ նոր բաժանորդ դառնալուն, 6-ը՝ խմելու ջրի որակին և 66-ը՝ այլ բնույթի,
- հեռահաղորդակցությանն առնչվող 33 դիմումներից 8-ը վերաբերել են վճարման հաշիվներին, 1-ը՝ նոր բաժանորդ դառնալուն և 24-ը՝ այլ բնույթի:

2019 թվականի ընթացքում հանձնաժողով ներկայացված դիմումների և հաշվետվությունների վերլուծությունների արդյունքները հաշվի են առնվել էլեկտրական էներգիայի, բնական գազի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների լրամշակման ընթացքում, իսկ դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Սպառողը հնարավորություն է ունեցել նաև անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Տեղեկատվություն սպառողին» և «Հարց ու պատասխան» բաժիններից: Սպառողի իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Հարց ու պատասխան» բաժնում պարբերաբար թարմացվել են դիմումատուի կողմից հաճախակի տրվող հարցերը:

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների մատուցմանն առնչվող գրավոր և բանավոր ներկայացված դիմումների սահմանված կարգով և ժամկետներում քննարկումը, որպես սպառողների սպասարկման որակի ցուցանիշ, մշտապես վերահսկվում է հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողով ներկայացված՝ էլեկտրական էներգիայի, բնական գազի, խմելու ջրի մատակարարմանը և հեռահաղորդակցության ոլորտին առնչվող գրավոր և բանավոր դիմումների վերաբերյալ 2018-2019 թվականների համեմատական ցուցանիշները ներկայացված են սույն հաշվետվության NN 12-15-րդ հավելվածներում:

4.2. Սպասարկման որակի ցուցանիշներ

Սպառողների կողմից բարձրացված խնդիրների շարքում իր կարևորությամբ առանձնանում է կարգավորվող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովումը: Նշված գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության առանցքում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության և հանձնաժողովի կողմից տեղում իրականացվող մոնիթորինգի, այնպես էլ սպառողների դիմում-բողոքների ուսումնասիրության միջոցով:

Մասնավորապես, հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաև սպառողների դիմում-բողոքների ուսումնասիրության հիման վրա մշտական դիտարկման է ենթարկում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին, նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման համակարգին, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացներում սահմանված ժամկետների խախտումները և դրանց պատճառները:

Սպառողների սպասարկման որակի պահանջների խախտման դեպքում իրավախախտ տնտեսավարողների նկատմամբ կիրառվում են օրենքով սահմանված համաչափ տույժեր և վերջիններս պարտավորեցվում են ամբողջապես վերականգնել իրենց կողմից խախտված ցանկացած իրավունք:

Նշվածը, սակայն, ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է ոլորտում արձանագրված թերությունների համակողմանի և խորքային վերլուծություն՝ վեր հանելով դրանց հիմքում ընկած իրական պատճառները և խորամուխ լինելով դրանց առավել արդյունավետ կարգավորմանն ուղղված լուծումների որոնքային: Նշված լուծումները դառնում են համապատասխան ծառայության մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման առարկա՝ մատակարար-սպառող հարաբերություններին վերաբերող կարգավորումները դարձնելով ժամանակի պահանջներին համահունչ:

Սպառողներին մատուցվող ծառայությունների՝ սպասարկման որակի պահանջների խախտման համար 2019 թվականի ընթացքում մատակարար կազմակերպությունները բաժանորդներին վճարել են դրամային հատուցումներ՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններով սահմանված չափերով, մասնավորապես՝

- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության

կողմից դրամային հատուցում է տրամադրվել 44 834 բաժանորդների, ընդհանուր՝ 77.6 միլիոն դրամի չափով և

- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից դրամային հատուցում է տրամադրվել 158 բաժանորդների, ընդհանուր՝ 0.29 միլիոն դրամի չափով:

Չարկ է նաև նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային արդյունքներով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

2019 թվականին լրամշակվել են էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները, որի արդյունքում՝

- սպառող (բաժանորդ) սահմանումը համապատասխանեցվել է «էներգետիկայի մասին» օրենքով տրված սահմանմանը,
- մատակարար-սպառող հարաբերությունների հետագա հստակեցման նպատակով մատակարարը պարտավորվել է էլեկտրամատակարարման պայմանագիրը լուծելուց առաջ տեղեկացնել սպառողին,
- հստակեցվել են պլանային ընդհատումների վերաբերյալ սպառողներին լրատվություն տրամադրելու, առևտրային հաշվառքի սարքերի ստուգաչափման ենթարկելու ընթացակարգերը և սպառողին ամրակցված առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցումից հետո այն մատակարարի կողմից երաշխավորված պահպանման ժամկետը:

Էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման աշխատանքները մշտապես գտնվում են հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Այս ուղղությամբ հանձնաժողովը, համագործակցելով «Չայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ, 2011 թվականից սկսած մի շարք փոփոխություններ է կատարել էլեկտրական ցանցին նոր սպառողների միացմանն առնչվող իրավական ակտերում, որոնք հիմք են հանդիսացել Չամաշխարհային բանկի կողմից յուրաքանչյուր տարի հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Էլեկտրական ցանցերին միացում» ցուցիչի մասով Չայաստանի Չանրապետության դիրքի բարելավմանը:

Վերը նշված գործընթացի բարելավման աշխատանքները շարունակվել են նաև 2019 թվականին: Մասնավորապես, հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 8-ի N130Ն որոշմամբ 0.4 կՎ լարմամբ ոչ պարզեցված միացման դեպքում էլեկտրական ցանցին միացման ժամկետները կրճատվել են 5 օրով՝ 60-ի փոխարեն սահմանվելով 55 օր:

Ներկայումս էլեկտրական ցանցին միացման գործընթացը հնարավորինս պարզեցված է, իսկ միացման ժամկետները հասցված են նվազագույնի:

Չարկ է նշել նաև, որ «Չայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական

ընկերության կողմից ներկայումս իրականացվող՝ շուրջ 350 մլրդ դրամ ծավալով 2016-2027 թվականների ներդրումային ծրագրում սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումների ծավալը կազմում է ծրագրի 65%-ը: Ծրագրի իրականացման արդյունքում գրեթե կրկնակի կկրճատվեն հոսանքազրկումների քանակը և տևողությունը, կբացառվեն լարման շեղումները, կներդրվեն էլեկտրամատակարարման ընդհատումների ավտոմատ մոնիթորինգի և վերականգնման համակարգեր, որոնք հետագայում իրենց դրական ազդեցությունը կունենան «էլեկտրականության միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքի բարելավման վրա:

2019 թվականին լրամշակվել են նաև բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները, որի արդյունքում՝

- սպասարկման որակի հետագա բարելավման նպատակով մատակարարի համար սահմանվել է պարտավորություն՝ իրազեկելու բաժանորդին գազամատակարարման վթարային ընդհատման և վերականգնման կանխատեսվող ժամկետի մասին,
- չգազիֆիկացված բնակավայրերում կամ համայնքի վարչական տարածքի սահմանից դուրս գտնվող գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միանալու ֆինանսական մատչելիության ապահովման նպատակով կանոններից հանվել է տեխնիկական պայմանների տրամադրման համար 15 000 դրամ գումարի վճարման պահանջը,
- առաջարկվել է երկարաձգել առևտրային հաշվառքի սարքերի ցուցմունքների գրանցման ժամկետը, որը հնարավորություն կտա օպտիմալացնել բնական գազի սակագնում ներառվող՝ աշխատակիցների վճարման ծախսերը,
- նախատեսվել է թաղամասերի և փողոցների գազիֆիկացումն իրականացնել առանձին բնակավայրերի գազիֆիկացման համար կանոններով սահմանված ընթացակարգով:

Բաժանորդների սպասարկման որակի բարելավման նպատակով հանձնաժողովը նախաձեռնել է նաև իր 2016 թվականի նոյեմբերի 30-ի N378Ն որոշմամբ սահմանված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների լրամշակման գործընթաց, որն իր ազդեցությունը կունենա 2020 թվականին: Լրամշակման նպատակն է եղել կանոնների գործնականում կիրառման և հանձնաժողով ստացվող դիմումների վերլուծության արդյունքում ի հայտ եկած թերությունների վերացումը, խնդիրների լուծումը, առկա կարգավորումների լրամշակումը և նոր կարգավորումների սահմանումը: Մասնավորապես, լրամշակման արդյունքում սահմանվել են.

- մատակարարի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելուց առաջ բաժանորդին նախապես ծանուցելու պահանջ,

- տեխնիկական պայմանների գործողության ժամկետի երկարաձգման հնարավորություն,
- մատակարարի տրամադրած՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման սխեմայի հիման վրա պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ մատակարարի կամ այլ հեռանկարային զարգացման ծրագրերի միջոցով համակարգերի կառուցման հնարավորություն, ինչը հանգեցրել է նշված դեպքերում դիմող անձից գանձվող նոր միացման վճարի նվազման,
- հաշվիչի ապահովաքակցման և ստուգաչափման նոր ընթացակարգեր և ժամկետներ, վերահաշվարկի հետ բաժանորդի չհամաձայնելու դեպքում բողոքարկման հնարավորություն,
- հաշվիչի ստուգաչափման ժամկետների փոխհամաձայնեցման հնարավորություն,
- բաժանորդի ցանկության դեպքում մատակարարի փոխարեն հաշվիչը ստուգաչափման տանելու հնարավորություն,
- հաշվիչի ցուցմունքի հիման վրա միջին ամսական ծախսով գրանցման հնարավորություն,
- նոր միացմանը վերաբերող դիմումին ժամկետի խախտմամբ պատասխանելու դեպքում դիմող անձին տուժանք վճարելու պահանջ,
- մինչև 2017 թվականի հունվարի 1-ը տեղակայված հաշվիչների պարագայում հաշվիչի աշխատանքի տոկոսի շեղման դեպքում վերահաշվարկ չկատարելու պահանջ և այլն:

5. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ

2019 թվականի ընթացքում հանձնաժողովը, գործելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, աշխատանքներ է իրականացրել բնագավառում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, մրցակցության խթանման, շարժական կապի ծառայությունների հասանելիության ապահովման, բաժանորդների իրավունքների և շահերի պաշտպանության, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների և ծառայությունների ներդրման ուղղությամբ: Մասնավորապես, կարևորվում են իրականացված հետևյալ աշխատանքները.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի շրջանակում, այդ թվում՝

հանձնաժողովի կողմից սահմանված լիցենզիոն պարտավորությունների հիման վրա, «ՎեոՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» և «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունները շարունակել են արդիականացնել իրենց հանրային շարժական կապի ցանցերն ու ծածկույթները:

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում առկա է 1003 բնակավայր (ներառված չէ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրը), որոնցից 32-ում բնակչություն առկա չէ, սակայն դրանցից 29-ում առկա է հանրային շարժական կապի ծածկույթ:

Հաշվի առնելով հանձնաժողովի համապատասխան որոշման համաձայն՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների կողմից 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ իրենց շարժական կապի ծառայությունների հասանելիության վերաբերյալ հրապարակված տեղեկատվությունը՝ կարելի է փաստել, որ հանրապետության բոլոր բնակավայրերը (100 տոկոս) ապահովված են հանրային շարժական կապի 2G և 3G տեխնոլոգիաների ծածկույթով, իսկ բնակավայրերի 89.5%-ը (898 բնակավայր) ապահովված են հանրային շարժական կապի 4G+ տեխնոլոգիայի ծածկույթով: Ընդ որում, հանրապետության բնակավայրերի 47.2%-ը (474 բնակավայր) ապահովված է երկու օպերատորի հանրային շարժական կապի 4G+ տեխնոլոգիայի ծածկույթով: Պետք է նշել, որ 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ նշված տեխնոլոգիայի ծածկույթով ապահովված էր բնակավայրերի 88.0%-ը՝ ընդամենը մեկ օպերատորի ծածկույթով:

Հանրային շարժական կապի ծածկույթի ընդլայնման և տեխնոլոգիական զարգացման աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում, 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը (100 տոկոս) ապահովված են հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայությունների հասանելիությամբ, մասնավորապես, 996 (99.3 տոկոս) բնակավայրերում հասանելի են ամրակցված հեռախոսակապի անլար տեխնոլոգիաների ծառայությունները և 230 (22.9 տոկոս) բնակավայրերում՝ ամրակցված հեռախոսակապի լարային տեխնոլոգիաների ծառայությունները:

Միաժամանակ, հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ ապահովված են հանրապետության բոլոր բնակավայրերը (100 տոկոս), այդ թվում՝ 997 (99.4 տոկոս) բնակավայր անլար և 517 (51.5 տոկոս) բնակավայր՝ լարային տեխնոլոգիաների կիրառմամբ, որը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 12

տոկոսով: Հանրապետության 470 բնակավայրեր (46.9 տոկոս) ապահովված են օպտիկամանրաթելային FTTx տեխնոլոգիայի հիման վրա ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ, որը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 41 տոկոսով:

2020 թվականի ընթացքում ամրակցված ցանցերի ենթակառուցվածքների ներդրմանն ուղղված աշխատանքները կշարունակվեն նաև հանրապետության այլ բնակավայրերում:

Ամփոփելով վերոնշյալը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության 1003 բնակավայրերից հանրային շարժական կապի ծածկույթ չունեցող 3 և ամրակցված կապի ծածկույթ չունեցող 4 բնակավայրերի չբնակեցված լինելու հանգամանքը՝ կարելի է փաստել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերն ապահովված են հանրային շարժական կապի ծածկույթով, ինչպես նաև լարային և (կամ) անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ:

3. Հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության հանրային շարժական կապի ցանցի երեք օպերատորների միջև կազմակերպվող մրցույթների միջոցով հանձնաժողովի տնօրինման տակ գտնվող 800ՄՀց և 1800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի ազատ հատվածների տրամադրման գործընթացը, որի արդյունքում բացի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կատարված 2.5 միլիարդ դրամ մուտքից, Հայաստանի Հանրապետության բնակավայրերում մեկ տարվա ընթացքում կապահովվի շարժական կապի ցանցի 4G+LTE-A տեխնոլոգիայի հիման վրա առնվազն մեկ օպերատորի 100 տոկոս և 2 օպերատորների փոխադարձ ներթափանցելիության առնվազն 80 տոկոս ծածկույթ, իսկ հետագայում ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի տեսքով պետական բյուջե կփոխանցվի տարեկան լրացուցիչ 840 միլիոն դրամ գումար՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի գծով տարեկան մուտքերը հասցնելով շուրջ 8.0 միլիարդ դրամի:

4. Նկատի ունենալով, որ արդիականացված CDMA տեխնոլոգիայի կիրառմամբ հանրապետության բնակավայրերում մատուցվող լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունները լիովին չեն բավարարում Հայաստանի Հանրապետության մարզերում ինտերնետի նկատմամբ սպառողների աստիճանաբար աճող տեղեկատվական պահանջները՝ հանձնաժողովը նախատեսել է 2500 ՄՀց տիրույթի համապատասխան հատվածի օգտագործման կազմակերպմամբ զարգացնել ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությունը՝ հաշվի առնելով նշված տիրույթի կիրառմամբ առավել արագագործ ինտերնետ ծառայությունների մատուցման հնարավորությունները:

5. 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործունեություն է իրականացրել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի 171 լիցենզավորված օպերատոր: Ընդ որում, 2019 թվականի ընթացքում լիցենզավորված 38 օպերատորներից 32-ին տրամադրվել է ցանցի լիցենզիա՝ մարզային բնակավայրերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար:

6. 2019 թվականի ապրիլի 3-ին հանձնաժողովի և «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Յայաստան», «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունների միջև ստորագրվել է փոխկապակցման վճարների վերաբերյալ փոխընթացման հուշագիր, որի համաձայն 2019 թվականի հունիսի 1-ից հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերի, ինչպես նաև շարժական ու ամրակցված կապի ցանցերի միջև փոխկապակցման վճարը հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է 5 դրամ/րոպե (առանց ավելացված արժեքի հարկի):

Հանձնաժողովը նախաձեռնել և իրականացրել է «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Յայաստան» և «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերություններին իրենց անհատական հանրային շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ ճանաչելու և «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Յայաստան», «ԶԻԷՆՍԻ-Ալֆա», «Յուքոմ» փակ բաժնետիրական, «Քրոսսնեթ», «Այթեր», «Զիթել», «Ինտերնետ կոմունիկացիաներ», «Չորադրյուր Համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ և «Հայ-Թեք Գեթվեյ Ինք» ընկերություններին իրենց անհատական հանրային ամրակցված հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ ճանաչելու գործընթացները:

Հաշվի առնելով վերոնշյալը և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 37-րդ հոդվածով հանձնաժողովին վերապահված լիազորությունը՝ այն է, միակողմանիորեն սահմանել փոխկապակցման դրույքաչափեր միջազգային չափորոշիչների հիման վրա, հանձնաժողովը մշակել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման մեթոդիկան:

Մեթոդիկան սահմանում է անհատական հանրային ամրակցված կամ շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման կարգը:

Մասնավորապես, վճարները հաշվարկվում են միջազգային համեմատելի ցուցանիշների կիրառման (benchmarking) սկզբունքով՝ զուտ ներքևից դեպի վեր երկարաժամկետ հավելյալ ծախսերի հաշվարկման (Pure BU-LRIC) մեթոդով

փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարներ կիրառող եվրոպական երկրների շարժական (կամ ամրակցված) կապի ցանցում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների պարզ միջին մեծության չափով և գործողության մեջ են դրվում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից, իսկ դրա հաշվարկման համար անհրաժեշտ միջազգային համեմատելի ցուցանիշների տվյալների հավաքագրման համար հիմք է ընդունվում տվյալ տարվան նախորդող տարվա երկրորդ կիսամյակում էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC) կողմից հրապարակվող՝ հրապարակման տարվա հունվարի 1-ի դրությամբ եվրոպական երկրներում փոխկապակցման վճարների վերաբերյալ զեկույցը:

Նշված մեթոդիկայի հիման վրա հանձնաժողովի համապատասխան որոշումներով սահմանվել են 2020 թվականի հունվարի 1-ից կիրառման ենթակա հանրային ամրակցված և շարժական հեռախոսակապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարները՝ շարժական կապի ցանցերի համար՝ 3.93 դրամ/րոպե (առանց ԱԱՀ-ի), իսկ ամրակցված ցանցերի համար՝ 0.96 դրամ/րոպե (առանց ԱԱՀ-ի):

7. Հանձնաժողովի որոշմամբ սահմանված՝ կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության շուկաների ցանկից հանվել է «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների մեծածախ շուկան, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչվել միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունը դասակարգելու, միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկան և այդ շուկայում անձի գերիշխող դիրք զբաղեցնելու չափորոշիչը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ 2009-2019 թվականների ընթացքում աճել են միջազգային «ԱՅՓԻ» տարանցիկ հոսքեր ներմուծող ընկերությունների թիվն ու նրանց միջև մրցակցությունը, հանրապետություն են ներմուծվել առավել մեծ քանակությամբ «ԱՅՓԻ» տարանցիկ հոսքեր, որոնց սակագները նվազել են և, հետևաբար, «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների մեծածախ շուկան «ex ante» (նախքան փաստերի տեղի ունենալը) կանխատեսող մեթոդով կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է:

8. 2019 թվականին Արցախի Հանրապետությունում Հայաստանի և Արցախի շահագրգիռ պետական մարմինների և շարժական կապի օպերատորների մասնակցությամբ անցկացված համատեղ քննարկումների արդյունքում երկու երկրների կապի օպերատորների միջև գործող ռուսից ծառայության սակագները նվազեցվեցին, մասնավորապես՝ 2019 թվականի օգոստոսի 1-ից Արցախում «ՎեՈՆ Արմենիա» և «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունների ելքային և մուտքային զանգերի համար գործող 45 դրամ/րոպե սակագինը հավասարեցվեց «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության կողմից կիրառվող հետևյալ

սակագներին՝ 38 դրամ/րոպե ելքային զանգերի համար, 25 դրամ/րոպե մուտքային զանգերի համար, իսկ sms կարճ հաղորդագրությունների համար գործող 60 դրամ սակագինը փոխարինվեց 40 դրամով:

Այնուհետև, 2019 թվականի սեպտեմբերի 6-ին հանձնաժողովի, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի և «ՎեՈՆ Արմենիա», «ՄՏՄ Հայաստան», «Յուբոն» ու «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությունների միջև ստորագրվել է փոխկապակցման վճարների և ռոումինգի ծառայությունների սակագների վերաբերյալ փոխընթացման հուշագիր:

Մասնավորապես, հուշագրի համաձայն «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության և Հայաստանի Հանրապետության օպերատորների կողմից ապահովվեց բաժանորդների համար Արցախի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի հունվարի 1-ից իրենց կողմից ռոումինգի ծառայությունների առավելագույն սակագների կիրառումը:

Արդյունքում, 2020 թվականի հունվարի 1-ից՝

- ելքային զանգերի սակագները նվազեցվեցին շուրջ 25 տոկոսով, այնուհետև 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ նվազումը կհասնի 30 տոկոս,

- մուտքային զանգերի սակագները նվազեցվեցին շուրջ 40 տոկոսով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 45 տոկոս,

- տվյալների փոխանցման և ինտերնետ հասանելիության ծառայությունների սակագները նվազեցվեցին շուրջ 50 տոկոսով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 65 տոկոսով,

- կարճ sms հաղորդագրությունների սակագինը նվազեցվեց շուրջ 65 տոկոսով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 75 տոկոսով:

Հաշվի առնելով հուշագրով ձեռք բերված պայմանավորվածությունը՝ հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 20-ի N433Ն որոշմամբ հաստատվել է «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում սկզբնավորված զանգերի Հայաստանի Հանրապետության շարժական և անրակցված հեռախոսակապի օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում վերջնավորման փոխկապակցման ծառայությունների առավելագույն վճարների կիրառման ժամանակացույցը, որի համաձայն՝ ըստ ժամանակացույցի, 2020 թվականի հունվարի 1-ից, յուրաքանչյուր տարի աստիճանաբար կնվազեցվի «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության և «ՎեՈՆ Արմենիա», «ՄՏՄ Հայաստան» ու «Յուբոն» ընկերությունների շարժական կապի ցանցերի, շարժական ու անրակցված կապի ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների առավելագույն վճարները՝ 2025 թվականի

հունվարի 1-ից հետո այն սահմանելով 5 դրամ/րոպե (առանց ԱԱՀ):


Մինևույն ժամանակ, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 15-ի N59Ն համանման որոշմամբ հաստատվել է նաև Հայաստանի Հանրապետության շարժական և անրակցված հեռախոսակապի օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում սկզբնավորված զանգերի «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում վերջնավորման փոխկապակցման ծառայությունների առավելագույն վճարների կիրառման ժամանակացույցը:

9. Հանձնաժողովի կողմից 2019 թվականի ընթացքում ընդունվել են հեռահաղորդակցության ոլորտին առնչվող 234 իրավական ակտեր, այդ թվում՝ 11 նորմատիվ ակտ:

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև մրցակցությունը խթանելու և տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու սկզբունքների վրա հիմնված կարգավորման քաղաքականության իրականացման արդյունքում արձանագրվել են հետևյալ զարգացումները.

- 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 882 000 Մբիթ/վ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 54.2 տոկոսով:


Ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի թողունակության 2012-2019 թվականների աճի դինամիկան.



- Մրցակցության արդյունքում միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է այդ ծառայության սակագինը: 2019 թվականի տարեվերջին 1 Մբիթ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի միջին շուկայական արժեքը կազմել է 750 դրամ, որը 2018 թվականի տարեվերջի համեմատությամբ

նվազել է 25 տոկոսով:

Ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության սակագների 2012-2019 թվականների նվազման դինամիկան՝ 1 Մբիթ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի համար.



- Լայնաշերտ անրակցված ինտերնետ հասանելիության ծառայությունների մանրածախ շուկայում գերակշռել են օպտիկամանրաթելային FTTx օգտվող բաժանորդները, որոնց տեսակարար կշիռը նշված շուկայում 2019 թվականին կազմել է շուրջ 59 տոկոս: Ընդ որում, 2018 թվականի համեմատ FTTx օգտվող բաժանորդների թվաքանակն աճել է շուրջ 19 տոկոսով: Միևնույն ժամանակ, շուրջ 11 տոկոսով նվազել է լարային xDSL տեխնոլոգիայով ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թվաքանակը:


- Մանրածախ շուկայում լայն տարածում են ստացել առավել արագագործ տեխնոլոգիաների (օրինակ՝ FTTH) վրա հիմնված ինտերնետ հասանելիության սակագնային փաթեթներ, որոնք սպառողներին առաջարկվել են ինչպես ինքնուրույն ծառայության, այնպես էլ «Երեքը մեկում (Triple Play)» և «Չորսը մեկում (Quad Play)» ձևաչափով՝ ներառելով անրակցված կապի տեխնոլոգիայի հիման վրա մատուցվող հեռախոսակապը, ինտերնետ հասանելիությունը, «ԱՅՓԻ» հեռուստատեսությունը, ինչպես նաև շարժական բջջային հեռախոսակապը: Մասնավորապես, շուկայում «Երեքը մեկում (Triple Play)» ծառայությունների փաթեթով առաջարկվում են ինտերնետ հոսքի 20Մբ/վ-ից մինչև 100Մբ/վ արագություններ՝ 8500 դրամից մինչև 24000 դրամ սակագներով, իսկ «Չորսը մեկում (Quad Play)» ծառայությունների փաթեթով՝ 7990 դրամից մինչև 31500 դրամ սակագներով:

- Հանրային շարժական կապի բաժանորդագրությունների թվաքանակը 2019

թվականի տարեվերջին կազմել է 3 618 747, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է մոտ 1,1 տոկոսով:


- Ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների թիվը (այդ թվում՝ շարժական 3G/4G/4G+ և 2G) 2019 թվականին կազմել է 3 087 291, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 6.7 տոկոսով:

- Ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների թիվը (ներառյալ՝ շարժական 3G/4G/4G+) 2019 թվականին կազմել է 2 830 853, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների թվի 9.4 տոկոս աճ: Ստորև բերված է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների թվի 2012-2019 թվականների աճի դինամիկան.




- Ավելացել են շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների թիվը 2019 թվականին կազմել է 2 445 149, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների թվի աճ 9.2 տոկոսով:

Ստորև բերված է շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների թվի 2012-2019 թվականների աճի դինամիկան.



• Ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդագրությունների թիվը 2019 թվականի տարեվերջին կազմել է 385 704, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 11 տոկոսով: Ստորև բերված է ամրակցված լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդագրությունների թվի 2012-2019 թվականների աճի դինամիկան.



6. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը

Համաձայն գործող օրենսդրության՝ հանձնաժողովն ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը՝

զանգվածային լրատվամիջոցների, պաշտոնական ինտերնետային կայքի և այլ միջոցներով: Այս ուղղությամբ հանձնաժողովի ձեռնարկած քայլերը կրում են հետևողական բնույթ և միտված են հանրության շրջանում կառույցի դերի վերաբերյալ տեղեկատվության ընդլայնմանը և վերջինիս նկատմամբ վստահության բարձրացմանը: Մասնավորապես,

- Հանձնաժողովը, որպես կոլեգիալ ինքնավար մարմին, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ՝ դռնբաց միստերի միջոցով: 2019 թվականին հրավիրվել է հանձնաժողովի 88 միստ և ընդունվել 541 որոշում: Այդ առումով, հանձնաժողովը, իր սահմանած կարգի համաձայն, հայտարարում է հանձնաժողովի միստերի անցկացման վայրը, օրը և ժամը, հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց ու հանրության ներկայացուցիչներին մասնակցելու միստերին՝ իր վարչական շենքի հնարավորությունների սահմաններում, ստանալու օրակարգ և քննարկվող նյութերը, ներկայացնելու տեղեկություններ և հանդես գալու ելույթներով: Նիստում սպառողների համար սակագների հաշվարկման մեթոդիկաները, բնագավառների (համակարգերի) կառուցվածքին, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցեր քննարկվելու դեպքում հանձնաժողովը ողջամիտ ժամկետում այդ մասին իրազեկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, կարգավորվող ոլորտի իրավասու պետական մարմնին և սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացուցիչներին մասնակցելու միստերին, հանդես գալու ելույթներով և առաջարկություններով: Նիստերի կազմակերպման և անցկացման վերաբերյալ կանոնակարգումների բարեփոխումները մշտապես հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են:
- Հանձնաժողովը նախաձեռնել է իր պաշտոնական ինտերնետային կայքի արդիականացման աշխատանքները: Ներդրվել է ավելի արագ և հարմարավետ կառավարման համակարգ՝ դարձնելով կայքը ժամանակին համընթաց ու անվտանգ, ինչպես նաև ընդհանուր որոնման ժամանակակից գործիքներ և սմարթ հեռախոսներից կայքի պատշաճ դիտելիության հնարավորություն:
- Հանձնաժողովի կայքում գործել է «www.e-request.am» էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը, ինչը հնարավորություն է տվել քաղաքացիներին առցանց եղանակով ներկայացնել դիմում, հարցում կամ բողոք և նույնպես առցանց ստանալ պատասխանը:
- Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը պարբերաբար թարմացվել է՝ հնարավորություն ընձեռելով զանգվածային լրատվամիջոցներին,

սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և ցանկացած շահագրգիռ անձի իրազեկվել հանձնաժողովի գործունեության, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման ներկա գործընթացների, ծառայությունների սպասարկման որակի, մատակարար-սպառող փոխհարաբերությունների և այլնի մասին:

- Հանձնաժողովի հաղորդակցության գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծվել են նաև հարթակներ սոցիալական ցանցերում, որոնց միջոցով սպառողների հետ շփումները կրել են ավելի ինտերակտիվ և օպերատիվ բնույթ:
- Կարևորելով հանձնաժողովի գործունեության խորքային, բազմակողմանի և հավասարակշռված լուսաբանման և սպառողների իրազեկվածության աստիճանի բարձրացման անհրաժեշտությունը՝ տնտեսական ոլորտն ու հանրային ծառայությունների կարգավորման դաշտը լուսաբանող լրագրողների և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար հանձնաժողովը նախաձեռնել է եռօրյա սեմինար, որտեղ զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել ծանոթանալ հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղություններին, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման ներկա գործընթացներին, սպառողներին առնչվող նորություններին և այլ կարևոր զարգացումներին:
- Հաշվի առնելով հանրության առջև հաշվետու լինելու օրենքի պահանջը՝ ինչպես յուրաքանչյուր տարի, 2019 թվականին ևս, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում և մանուլում հրապարակել է նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը: Միաժամանակ, իր հաջորդ տարվա գործունեության ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելու և ողջամիտ առաջարկությունները ծրագրում ներառելու նպատակով հանձնաժողովն այն հրապարակել է իր պաշտոնական ինտերնետային կայքում և քննարկել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների և սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ:
- Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում եռամսյակային արդյունքներով հրապարակվել է 2019 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:
- 2019 թվականին հանձնաժողովի անդամները և մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես են եկել

ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

7. Միջազգային համագործակցություն

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը 2019 թվականի ընթացքում համագործակցել է Համաշխարհային բանկի (WB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Ասիական զարգացման բանկի (ADB), ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (NARUC), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), ԵՄ համապատասխան կառույցների, մասնավորապես՝ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg), Էներգետիկ համայնքի քարտուղարության (Energy Community Secretariat), Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) հետ: Նշված կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվել են սեմինարներ տարբեր երկրների կարգավորողների համար էներգետիկ շուկաների ազատականացման, բաշխման և հաղորդման ցանցերի ցանցային կողեքսների մշակման, ցանցերի հուսալիության և անվտանգության, ներառյալ՝ կիբերանվտանգության, վերականգնվող ռեսուրսներից էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման, ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) կարգավորման քաղաքականության վերաբերյալ, որոնք հնարավորություն են տվել հանձնաժողովին ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և ստանալ համապատասխան տեղեկատվություն:

Հանձնաժողովը, հանդիսանալով Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) և Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) անդամ, ունի որոշակի պարտականություններ՝ ներառյալ մասնակցությունը տարեկան ընդհանուր ժողովներին և նշված կազմակերպությունների կողմից ստեղծված համապատասխան կոմիտեների և աշխատանքային խմբերի նիստերին:

2019 թվականին ևս հանձնաժողովը շարունակել է աշխատանքները ԵՄ Արևելյան

գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg) շրջանակում՝ այդ երկրների միջև միջազգային ռոումինգի միասնական տարածք ձևավորելու, այդ թվում՝ սակագները նվազեցնելու ուղղությամբ, ինչպես նաև մասնակցել է Համաշխարհային բանկի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից կազմակերպվող սեմինարներին:

Շարունակվել է համագործակցությունը Վրաստանի էներգետիկայի կարգավորման ազգային հանձնաժողովի և Չեխիայի հեռահաղորդակցության հանձնաժողովի հետ՝ կնքված հուշագրերի շրջանակներում:

2019 թվականին ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակում սկիզբ է դրվել Շոտլանդիայի ջրային ոլորտը կարգավորող հանձնաժողովի հետ նոր համագործակցության:

Հանձնաժողովը, հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին արձանագրության» (պայմանագրի հավելված 20) շրջանակում նախատեսված աշխատանքների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կողմից լիազորված մարմին, շարունակել է մասնակցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բնական մենաշնորհների գծով խորհրդատվական կոմիտեի նիստերին և փորձագետների խորհրդակցություններին:

Համագործակցելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ՝ հանձնաժողովը շարունակել է համագործակցությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան կառույցների հետ՝ Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

Արդյունավետ համագործակցություն է իրականացվել Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ, որը շարունակվել է նաև 2019 թվականի ընթացքում՝ համատեղ աշխատանքային ծրագրին համապատասխան: Մասնավորապես, երկու կարգավորող մարմինների համատեղ աշխատանքային ծրագրի շրջանակում իրականացվել են համապատասխան օրենքների և կանոնների նախագծերի մշակման, լրամշակման, ոլորտների մասնագետների փորձի փոխանակման, ինչպես նաև նախանշված քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցության աշխատանքներ՝ ըստ կարգավորվող ոլորտների և գործառույթների:

8. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովում

Հանձնաժողովի տարեկան բյուջեն ձևավորվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումներին համապատասխան: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի համաձայն ձևավորված՝ հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1,75 գործակցով, ինչը 2019 թվականի հաստատված պետական բյուջեով կազմել է 804.9 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 785.4 մլն դրամը, իսկ տարբերությունը՝ 19.5 մլն դրամի չափով, վերադարձվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Հանձնաժողովի բյուջետային մուտքերը ձևավորվում են հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներից: Կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, վճարողների շրջանակը և վճարման կարգը սահմանված են «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքով:

Հետևաբար, հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման և դրանց ծախսման հետ կապված հարաբերությունները բյուջետային մուտքերի և ելքերի մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի վրա թողնում են չեզոք ազդեցություն:


Հարկ է նշել, որ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորող մարմնի անկախության և վարչական իրավագործության ամրապնդման հանձնառություն Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրով (CEPA):

2019 թվականի ընթացքում հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովել են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե զգալի մուտքեր՝ լիցենզիաների տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, հանձնաժողովի կիրառած տուգանքների, ինչպես նաև նոր էլեկտրակայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու, լիցենզիայի

պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ներկայացված ֆինանսական երաշխիքներից գանձվող գումարների տեսքով: Նշված աղբյուրներից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցվել է շուրջ 6.2 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ 4.9 մլրդ դրամը կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը:

2018 և 2019 թվականներին ավարտված և շահագործման հանձնված ներդրումների ծավալները

Ընկերություն	Ներդրումների ծավալը (մլն դրամ)	
	2018 թվական	2019 թվական
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	2 333.0	3 847.1
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	21 120.6	31 700.0
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	13 172.9	9 699.3
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ	343.3	500.0
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	19.6	95.0
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	42.2	-
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	-	16 600.0
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	1 168.5	6 513.0
ԸՆԴԱՄԵՆԸ	38 200.0	68 954.4



Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի գործունեության հաշվետվության

ԳՈՐԾՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՔՐ ՀԻԴՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

Ցուցանիշի անվանումը		Չափի միավոր	2019 հունվար	2020	2021	2022 հունվար
ՓՀԷԿ-երի քանակը	գործարկման ենթակա	հատ	7	15	3	212
	գործող	հատ	187	194	209	
ՓՀԷԿ-երի հզորությունը	գործարկման ենթակա	կՎտ	29 463	18 286	11 249	429 825
	գործող	կՎտ	370 827	400 290	418 576	
ՓՀԷԿ-երի էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրությունը	գործարկման ենթակա	մլն կՎտժ	99.8	67.5	36.2	1 168
	Գործող	մլն կՎտժ	964.2	1 063.9	1 131.4	
ՓՀԷԿ-երում իրականացման ենթակա ներդրումների կանխատեսվող ծավալը	գործարկման ենթակա	մլն դրամ	13 736	8 035	4 395	26 167

Հավելված N3

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի գործունեության հաշվետվության

ԳՈՐԾՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՔՐ ՀԻԴՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ

ՀՀ մարզի անվանումը	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2019թ. հունվարի 1-ի դրությամբ գործող	2019-2021թթ. ընթացքում գործարկման ենթակա	2022թ. հունվարին կանխատեսվող
Լոռի	Քանակը	հատ	28	7	35
	Հզորությունը	կՎտ	66 429	8 255	74 684
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	186.3	32.8	219.1
Սյունիք	Քանակը	հատ	58	6	64
	Հզորությունը	կՎտ	92 381	22 541	114 921
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	272	74	345.9
Տավուշ	Քանակը	հատ	16	2	18
	Հզորությունը	կՎտ	24 969	2 010	26 979
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	58.0	9.8	67.8
Վայոց Ձոր	Քանակը	հատ	32	7	39
	Հզորությունը	կՎտ	76 684	23 682	100 366
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	214.9	78.1	293.0
Արմավիր	Քանակը	հատ	4	2	6
	Հզորությունը	կՎտ	10 291	998	11 289

	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	21.7	5.1	26.8
Գեղարքունիք	Քանակը	հատ	12	0	12
	Հզորությունը	կՎտ	30 155	0	30 155
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	68.8	0.0	68.8
Շիրակ	Քանակը	հատ	8	0	8
	Հզորությունը	կՎտ	19 275	0	19 275
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	44.5	0.0	44.5
Արարատ	Քանակը	հատ	2	0	2
	Հզորությունը	կՎտ	3 520	0	3 520
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	5.2	0.0	5.2
Կոտայք	Քանակը	հատ	15	0	15
	Հզորությունը	կՎտ	14 029	0	14 029
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	42.3	0.0	42.3
Արագածոտն	Քանակը	հատ	11	1	12
	Հզորությունը	կՎտ	32 345	1 512	33 857
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	47.6	4.0	51.6
Երևան	Քանակը	հատ	1	0	1
	Հզորությունը	կՎտ	750	0	750
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	2.7	0.0	2.7

ԳՈՐԾՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՔՐ ՀԻԴՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ԴՐԱՆՑ ՏԻՊԵՐԻ

Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2019թ. հունվարի 1-ի դրությամբ գործող	2019թ. հունվարի 1-ի դրությամբ կառուցվող	Ընդամենը
Քանակը, այդ թվում	հատ	187	25	212
<i>հաշվարկային</i>	<i>հատ</i>	<i>10</i>	<i>0</i>	<i>10</i>
բնական ջրահոսքի վրա	հատ	132	19	151
<i>ոռոգման համալիրների վրա</i>	<i>հատ</i>	<i>38</i>	<i>6</i>	<i>44</i>
<i>խմելու ջրատարների վրա</i>	<i>հատ</i>	<i>7</i>	<i>0</i>	<i>7</i>
Հզորությունը	կՎտ	370 827	58 998	429 825
<i>հաշվարկային</i>	<i>կՎտ</i>	<i>9 924</i>	<i>0</i>	<i>9 924</i>
բնական ջրահոսքի վրա	կՎտ	290 839	52 446	343 285
<i>ոռոգման համալիրների վրա</i>	<i>կՎտ</i>	<i>66 913</i>	<i>6 552</i>	<i>73 465</i>
<i>խմելու ջրատարների վրա</i>	<i>կՎտ</i>	<i>3 152</i>	<i>0</i>	<i>3 152</i>
Էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությունը	մլն կՎտժ	964.2	203.4	1 167.6
<i>հաշվարկային</i>	<i>մլն կՎտժ</i>	<i>27.2</i>	<i>0.0</i>	<i>27.2</i>
բնական ջրահոսքի վրա	մլն կՎտժ	720.2	179.3	899.5
<i>ոռոգման համալիրների վրա</i>	<i>մլն կՎտժ</i>	<i>198.2</i>	<i>24.1</i>	<i>222.3</i>
<i>խմելու ջրատարների վրա</i>	<i>մլն կՎտժ</i>	<i>18.6</i>	<i>0.0</i>	<i>18.6</i>


2019-2021 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գործարկման ենթակա 29 փոքր հիդրոէլեկտրակայաններից 23-ը կհանդիսանան բնական ջրահոսքի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների: 2022 թվականի հունվարի դրությամբ բնական ջրահոսքերի վրա գործող փոքր հիդրոէլեկտրակայանների քանակը կկազմի ընդհանուրի մոտ 79%-ը, նրանց հզորությունները կկազմեն ընդհանուրի մոտ 80%-ը, իսկ առաքվող էլեկտրական էներգիան՝ մոտ 77.5%-ը:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի գործունեության հաշվետվության


ԳՈՐԾՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՓՀԷԿ-ԵՐԻ) ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

Ցուցանիշի անվանումը		Չափի միավոր	2019 հունվար	2020	2021	2022 հունվար
Կայանների քանակը	գործարկման ենթակա	հատ	4	8	1	27
	գործող	հատ	14	18	26	
Կայանների հզորությունը	գործարկման ենթակա	կՎտ	4 298	86 486	4 000	106 544
	գործող	կՎտ	11 760	16 058	102 544	
Կայանների էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությունը	գործարկման ենթակա	մլն կՎտժ	8	201	10	237.2
	գործող	մլն կՎտժ	17.7	25.9	227.3	
Կայաններում իրականացման ենթակա ներդրումների կանխատեսվող ծավալը	գործարկման ենթակա	մլն դրամ	2 118.3	36 972.9	1 793.8	40 885
	գործող	մլն դրամ	0.0	2 118.3	39 091.2	

2004-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐԱՄԱԴԻՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՂ ՓՈՒԿԵՐԻ ՀՐՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



2004-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՂ ՓՈՒԿԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԸ



**Էլեկտրաէներգետիկական համակարգի 2019 թվականի
հիմնական ցուցանիշները**

(մլն կՎտժ)

h/h	Ցուցանիշներ	2018թ.	2019թ.	Տարբերություն
1	Էլեկտրական էներգիայի արտադրություն	7 776.9	7 632.3	-144.6
2	Էլեկտրական էներգիայի ծախսը արտադրող կայանների սեփական կարիքների համար	353.8	334.0	-19.8
3	Արտադրող կայաններից էլեկտրական էներգիայի օգտակար առաքում *	7 423.8	7 308.5	-115.3
4	Էլեկտրական էներգիայի ներհոսք	203.8	292.6	88.8
5	Էլեկտրական էներգիայի կորուստներ բարձր լարման ցանցերում	137.3	106.0	-31.3
6	Էլեկտրական էներգիայի արտահոսք	1 627.3	1 251.0	-376.3
7	Էլեկտրական էներգիայի կորուստներ բաշխման ցանցերում	474.7	442.0	-32.7
8	Էլեկտրական էներգիայի սպառում ըստ սպառման ոլորտների, այդ թվում՝	5 388.3	5 802.1	413.8
1)	<i>Բնակչություն</i>	<i>1 815.2</i>	<i>1 929.0</i>	<i>113.8</i>
2)	<i>Բյուջեային կազմակերպություններ</i>	<i>211.6</i>	<i>216.7</i>	<i>5.1</i>
3)	<i>Արդյունաբերություն</i>	<i>1 265.8</i>	<i>1 365.5</i>	<i>99.7</i>
4)	<i>Տրանսպորտ</i>	<i>96.2</i>	<i>101.6</i>	<i>5.4</i>
5)	<i>Ոռոգման համակարգ</i>	<i>170.3</i>	<i>153.7</i>	<i>-16.6</i>
6)	<i>Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգ</i>	<i>62.2</i>	<i>64.9</i>	<i>2.7</i>
7)	<i>Այլ սպառողներ</i>	<i>1 766.9</i>	<i>1 970.7</i>	<i>203.8</i>

* «Արտադրող կայաններից էլեկտրական էներգիայի օգտակար առաքում» տողի 2018 և 2019 թվականների ցուցանիշներում ներառված է նաև փոխհոսքերի արդյունքում ինքնավար արտադրողներից բաշխման ցանցեր առաքված էլեկտրական էներգիայի տարեկան դրական սալդոն, համապատասխանաբար՝ 0.7 և 10.2 մլն կՎտժ-ի չափով

**Փազամատակարարման համակարգի 2019 թվականի
հիմնական ցուցանիշները**

(մլն խմ)

h/h	Ցուցանիշներ	2018թ.	2019թ.	Տարբերություն
1	Ներկրված գազի ծավալը	2 463.4	2 545.4	82.0
2	Վերցվել է գազատարներից և գազի ստորգետնյա պահեստ և կայանից	60.2	30.3	-29.9
3	Մղվել է գազատարներ և գազի ստորգետնյա պահեստ և կայան	39.4	11.7	-27.7
4	Գազի կորուստները փոխադրման համակարգում	96.4	86.8	-9.6
5	Գազի ծախսը սեփական կարիքների համար՝ փոխադրման համակարգում	3.2	1.6	-1.6
6	Գազի կորուստները բաշխման համակարգում	27.5	27.4	-0.1
7	Գազի ծախսը սեփական կարիքների համար՝ բաշխման համակարգում	2.8	2.7	-0.1
8	Վերականգնված գազ	0.7	0.62	-0.1
9	Բաշխման համակարգում իրացված գազի ծավալը, այդ թվում՝	2 353.6	2 444.9	91.3
1)	<i>Բնակչություն</i>	<i>554.1</i>	<i>668.7</i>	<i>114.6</i>
2)	<i>Էներգետիկա</i>	<i>780.3</i>	<i>690.6</i>	<i>-89.7</i>
3)	<i>Արդյունաբերություն</i>	<i>226.4</i>	<i>208.6</i>	<i>-17.8</i>
4)	<i>Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼԾԿ)</i>	<i>552.7</i>	<i>577.2</i>	<i>24.5</i>
5)	<i>Բյուջեպային կազմակերպություններ</i>	<i>43.8</i>	<i>52.2</i>	<i>8.4</i>
6)	<i>Այլ սպառողներ</i>	<i>196.3</i>	<i>247.6</i>	<i>51.3</i>

Հավելված N10
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի գործունեության
հաշվետվության

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 2018-2019 թվականների ջրային հաշվեկշիռը

(հազ խմ)

h/h	Ցուցանիշներ	2018թ.	2019թ.	Տարբերություն
1	Համակարգ մուտք գործած ջրի ծավալը	587 320.2	563 101.0	-24 219.2
2	Կորուստներ համակարգում	467 588.6	431 362.2	-36 226.4
3	Ջրամատակարարում, այդ թվում՝	119 731.6	131 738.8	12 007.2
1)	<i>Բնակչություն</i>	<i>78 641.8</i>	<i>87 535.7</i>	<i>8 893.9</i>
2)	<i>Բյուջետային կազմակերպություններ</i>	<i>9 577.4</i>	<i>9 682.8</i>	<i>105.4</i>
3)	<i>Այլ սպառողներ</i>	<i>28 195.1</i>	<i>30 547.8</i>	<i>2 352.7</i>
4)	<i>Մեծածախ ջրամատակարարում</i>	<i>3 317.3</i>	<i>3 972.5</i>	<i>655.2</i>
4	Ջրահեռացում, այդ թվում՝	102 091.5	109 337.9	7 246.4
1)	<i>Բնակչություն</i>	<i>61 002.8</i>	<i>67 336.8</i>	<i>6 334.0</i>
2)	<i>Բյուջետային կազմակերպություններ</i>	<i>8 326.5</i>	<i>8 233.4</i>	<i>-93.2</i>
3)	<i>Այլ սպառողներ</i>	<i>26 797.3</i>	<i>27 761.2</i>	<i>963.9</i>
4)	<i>Մեծածախ ջրահեռացում</i>	<i>1 132.7</i>	<i>1 174.4</i>	<i>41.7</i>
5)	Երևանի «Մեթրոպոլիտեն» ՓԲԸ	4 832.2	4 832.2	0.0

Հավելված N11
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի գործունեության
հաշվետվության

Ոռոգման համակարգի 2018-2019 թվականների ջրային հաշվեկշիռը

(հազ խմ)

h/h	Ցուցանիշներ	2018թ.	2019թ.	Տարբերություն
1	Ընդամենը ջրառ	1 221 593.0	1 157 809.5	-63 783.5
2	Ջրի կորուստները համակարգում	291 735.5	244 387.0	-47 348.5
3	Ջրտուփի կետերում մատակարարված ոռոգման ջուր, այդ թվում՝	929 857.5	913 422.5	-16 435.0
1)	Ջրօգտագործողների ընկերությունների մատակարարվող ոռոգման ջուր	923 447.8	907 252.0	-16 195.8
2)	Այլ ջրօգտագործողներին մատակարարվող ոռոգման ջուր	6 409.7	6 170.5	-239.2

**Էլեկտրական էներգիայի մատակարարմանն առնչվող՝ գրավոր և բանավոր
 եղանակով ներկայացված դիմումների 2018-2019 թվականների
 համեմատական ցուցանիշները**

Ոլորտ	Բնույթը	գրավոր			բանավոր		
		2018թ.	2019թ.	Տարբերությունը	2018թ.	2019թ.	Տարբերությունը
Էլեկտրամատակարարում	Վճարման հաշիվների մասին	41	54	13	33	26	-7
	Կատարված վերահաշվարկի մասին	5	2	-3	5	3	-2
	Մատակարարման դադարեցման և վերականգնման մասին	12	13	1	40	30	-10
	Նոր բաժանորդ գրանցվելու մասին	33	28	-5	43	100	57
	Էլեկտրամատակարարման ընդհատումների մասին	15	20	5	24	24	0
	Որակի մասին	17	32	15	20	23	3
	Այլ	47	58	11	113	90	-23
	Ընդամենը	170	207	37	278	296	18

Բնական գազի մատակարարմանն առնչվող՝ գրավոր և բանավոր եղանակով ներկայացված դիմումների 2018-2019 թվականների համեմատական ցուցանիշները

Ոլորտ	Բնույթ	գրավոր			բանավոր		
		2018թ.	2019թ.	Տարբերությունը	2018թ.	2019թ.	Տարբերությունը
Գազամատակարարում	Կատարված վերահաշվարկի մասին	35	29	-6	12	20	8
	Վճարման հաշիվների մասին	4	8	4	3	3	0
	ՆԳՀ-ի սպասարկման ծառայության մասին	5	5	0	14	14	0
	Մատակարարման դադարեցման մասին	2	7	5	9	11	2
	Նոր բաժանորդ գրանցվելու մասին	9	9	0	6	15	9
	Այլ	16	21	5	41	62	21
	Ընդամենը	71	79	8	85	125	40

**Խմելու ջրի մատակարարմանն առնչվող՝ գրավոր և բանավոր եղանակով
 ներկայացված դիմումների 2018-2019 թվականների համեմատական
 ցուցանիշները**

Ոլորտ	Բնույթը	գրավոր			բանավոր		
		2018թ.	2019թ.	Տարբերությունը	2018թ.	2019թ.	Տարբերությունը
Ջրամատակարարում	Ներկայացրած վճարման հաշիվների մասին	38	47	9	34	15	-19
	Կատարված վերահաշվարկի մասին	328	149	-179	107	38	-69
	Ջրամատակարարման գրաֆիկի մասին	27	53	26	68	90	22
	Ջրամատակարարման ճնշման մասին	12	20	8	27	62	35
	Ջրամատակարար ցանցերի և կոյուղագծի տեխ. վիճակի մասին	31	30	-1	65	83	18
	Նոր բաժանորդ գրանցվելու մասին	46	23	-23	39	40	1
	Ջրամատակարարման որակի մասին	0	0	0	4	6	2
	Այլ	71	67	-4	118	66	-52
	Ընդամենը	553	389	-164	462	400	-62

Հեռահաղորդակցության ոլորտին առնչվող՝ գրավոր և բանավոր եղանակով ներկայացված դիմումների 2018-2019 թվականների համեմատական ցուցանիշները

Ոլորտ	Բնույթ	գրավոր			բանավոր		
		2018թ.	2019թ.	Տարբերությունը	2018թ.	2019թ.	Տարբերությունը
Հեռահաղորդակցություն	Վճարման հաշիվների մասին	13	10	-3	5	8	3
	Կատարված վերահաշվարկի մասին	1	0	-1	0	0	0
	Նոր բաժանորդ դառնալու մասին	0	0	0	0	1	1
	Այլ	15	28	13	23	24	1
	Ընդամենը	29	38	9	28	33	5